ՔԱՀԱՆԱՑԻՑ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ԳԱՆՁԱՐԱՆԻ ՎԱՐՁՈՒԹԵԱՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ցիշեալ գանձարանի նոր վարչութիւնը, մտնելով իւր պաշտօնի մէջ, որոշել է՝ 1, Խօջիվանքի գերեզմանատունը բարեկարգելու նպատակով, փակել նորա դռները և բանալ միմիայն յուղարկաւորութեան և այլ կարիքների ժամանակ։ Այդ նպատակով դռներին նշանակւում են պահապաններ։ 2, Շինել Խօջիվանքի յատակագիծը։ 3, Թուահատներ դնել չիրիմների վերայ. 4, Շաւիղներ շինել հանգստարանում երթևեկութեանց համար։ 5, Այբենական ցուցակ պահել հանգստարանում ննջեցեալների համար։ 6, Խօջիվանքում տեղի պակասութեան պատճառով՝ դնել կից՝ 1300 սաժէն գետինը։ 7, շինել 3 դիակառք, որոնք վարձու կարուեն ունևորներին, իսկ ձրի պիտի տրուին այն չքաւոր ննջեցեալների համար, որոնց համար քիւրեխ չեն շինելու և 8, բերել Եւրոպայից ննջեցեալը գերեզման իջեցնելու գործիք։

Գ. ՅԱՐՈՅԻ ԹՈՂԱԿԻ ԽՆԴԻՐԸ

ՄԿՐՏԻՉ Ծառայ Յիսուսի Քրիստոսի և անհասանելի կամօքն Աստուծոյ եպիսկոպոսապետ և կաթուղիկոս ամենայն Հայոց Ծայրագոյն Պատրիարք Համազգական նախամեծար Աթոռոյ Արարատեան առաքելական Մայր եկեղեցւոյ սրբոյ Էջմիածնի. գերաշնորհ Տէր-Գէորգ Սրբազեպիսկոպոսի Առաջնորդի թէմին Վրաստանի և Իմէրէթի, հարազատի Մայր Աթոռոյս ողջունիւ յայտ առնեմք։

Յայտնեցէք յարգելի հոգաբարձութեան ես կարդացի իրենց յայտարարութիւն որ գրած էին ուսուցիչ Նիկողայոս Յարոյի մասին։ Բայց խիղճ և արդարութիւն պարտաւոր կացուցանեն զիս, որ իմ առաջի կոնդակ ամենայն ճշտութեամբ գործադրել տաք, նկատելով պ. Յարոյի երկարամեայ աշխատութիւն ուսուցչական պաշտօնին ոչ միայն Ներսիսեան Դպրոցում այլ և Տփխիսու քանի դպրոցներ պաշտօն վարած է, որով եթէ ի միասին հաշուենք գրեթէ քսանևհինգ տարիէն աւելի կը լինի, ուստի արժանի է այս մշակ վարձու իւրում։

Ուստի կը պահանջեմ Ձեր արդարութենէն որ սոյն խնդիր գործադրել տաք, երկրորդ կոնդակովս նոյն հաստատելով։

ՄԿՐՏԻՉ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

Ի 5 Յունիսի 1903 ամի
Եւ ըստ Տոմարիս ՌՃԾԲ
Ի Հայրապետութեան մերում Ծ. ամի
ՅԱրարատեան Մայր Աթոռ
Ս. Էջմիածնի
Ի Վաղարշապատ
Թ. 734

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Յատուկ խնդրում եմ թոյլ տալ ներկայ երկտողս «Լումայ»-ում տպելու։

Ներկայ տարուայ «Նոր-Դար»-ի № 50-ում մի յօդուած էր տպուած «Գրական երեկոյ» վերնագրով որ կրում էր «Երեւանեան» ստորագրութիւնը։

Այդ յօդուածը մեծ աղմուկ հանեց Երեւանում և չը գիտեմ ինչու մի քանի չահագրգռուած պարոններ յօդուածի հեղինակը ինձ համարեցին և տակաւին յամառ կերպով համարում են։ Սպառնալիքներն ու բամբասանքը աւելի ևս մեծ չափեր ընդունեցին մանաւանդ վերջերս, երբ նոքա տեսան, որ իմ հերքումը մինչև այժմ չը տպուեց «Նոր-Դար»-ում, որ գրել էի տարուայ Մարտի 19-ին և կրկնել ու երեքկնել։

Որովհետև իմ հերքումը մինչև այժմ լոյս չը տեսաւ «Նոր-Դար»-ում, ստիպուած եմ դիմել «Լումայ»-ին խմբագրութեան և յատկապէս խնդրել տպելու սորա հետ ուղարկածս նոյն երկտող հերքումը ի խոյս ապագայ անախորժութեանց։

«Նոր-Դար»-ի յարգելի խմբագրութեան, Խնդրում եմ «Նոր-Դար»-ի մերձակայ համարներից մէկում տպագրել ներկայ երկտողս, որով յայտնում եմ, թէ իմ գրչին չէ պատկանում «Երեւանեան» ստորագրութեամբ «Նոր-Դար»-ի № 50 ի բանասիրական յօդուածը՝ «Գրական երեկոյ» վերնագրով։

Մակար Տէր-Սարգսեանց